Գիտեք, որ...

Նորաձևություն

Հագուստի դիզայները պետք է ոչ միայն կարողանա աշխատել ժամանակակից **նորաձևության** շրջանակներում, այլև զգա դրա հեռանկարային զարգացման ուղղությունները և կանխատեսի նորաձևության միտումները:

Լայն իմաստով՝ **նորաձևությունն** ընկալվում է որպես որոշակի ժամանակահատվածում և որոշակի միջավայրում մշակույթի տարբեր արտաքին դրսևորումների (կյանքի ոճ, ավանդույթներ, վարքագծի սովորույթներ, կենցաղի առարկաներ, հագուստ) նկատմամբ որոշակիորեն ձևավորված ճաշակի տիրապետություն:

Նորաձևությունը ոչ միայն հագուստի, այլ նաև ողջ հասարակության շարունակական զարգացման կարևորագույն գործոն է: Այն գեղագիտական երևույթ է, որն առաջին հերթին կապված է արվեստի ոլորտում գեղագիտական իդեալի ու ճաշակի փոփոխման հետ:

Նորաձևություն հասկացությունը հաճախ ներկայացվում է որպես ամենաանկայուն և արագ անցնող հանրաճանաչություն: Այն, որպես կանոն, ենթադրում է ոչ կայուն, հաճախ փոփոխվող դիրքորոշում: Եթե երևույթը կամ առարկան, լինելով նորաձև որոշակի ժամանակահատվածում, իր թարմությունը կորցնում է շրջապատի աչքում, ապա դառնում է ոչ նորաձև:

Ժամանակակից աշխարհում նորաձևությունն ունի սեզոնային բնույթ (գարուն-ամառ և աշուն-ձմեռ): Պատմականորեն վաղ նորաձևությունը կարող էր հազարամյակների ընթացքում չփոխվել: Ք.ա. 4-րդ հազարամյակից մինչև Ք. ա. 2-րդ հազարամյակը եգիպտական նորաձևությունը չի փոխվել, այն համարվում է հազարամյակների ընթացքում չփոփոխվող կանոնների վառ օրինակ: Այս դրույթը բազմիցս քննարկվել է: Պատմական կոստյումների անփոփոխության մասին տեսակետը կարող է լինել և՛ որպես աղբյուրների սահմանափակ լինելու արդյունք, և՛ որպես ավանդական ու պատմական նորաձևության զարգացման սկզբունքի չհասկացման հետևանք: